ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 236-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ» ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ (*amicus curiae*) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄԵԼՈՒ ԵՎ ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» դիմելու, ինչպես նաև այդ կապակցությամբ սույն գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունները, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի (ՀՕ-240-Ն, ընդունված է 2022 թվականի հունիսի 9-ին)՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով դիմողի ներկայացրած դիմումի, 06.09.2024 թ. դիրքորոշման, 16.09.2024 թ. լրացուցիչ դիրքորոշման, սույն գործով պատասխանողի՝ ՀՀ Ազգային ժողովի բացատրության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշման, ի պատասխան զեկուցող դատավորի հարցումների՝ ստացված ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի, Դատական դեպարտամենտի պատասխանների ուսումնասիրությունից հետևում է, որ Սահմանադրա-

կան դատարանի առջև բարձրացված սահմանադրական վեճը վերաբերում է իրավական խնդիրների, որոնց շրջանակն առնչվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա ձևավորված իրավունքին, ինչը Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետք է հաշվի առնվի Սահմանադրական դատարանի կողմից սույն գործի լուծման համար:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների մեկնաբանման կամ կիրառման հարցերի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի լուծմանն առաջադրված որոշ հարցադրումներում բարձրացված խնդիրների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի» կանոնադրության հիման վրա՝ դիմել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին»՝ հետևյալ հարցի վերաբերյալ խորհրդատվական կարծիք (*amicus curiae*) ստանալու նպատակով.

արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» ձևակերպումը համահունչ է իրավական որոշակիության սկզբունքի եվրոպական չափանիշներին:

2. «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»

գործի վարույթը կասեցնել՝ մինչև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի»՝ վերը նշված հարցի կապակցությամբ խորհրդատվական կարծիքն ստանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

11 հոկտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-156